ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Հասարակ+» ագրովարկ

Հրապարակվել է՝ 17.07.2026թ.

Վարկի տեսակը	«Հասարակ+» ագրովարկ՝ շահավետ պայմաններով և նվազագույն ժամկետներում փոխառու միջոցների ստացում
Վարկի նպատակը	Շրջանառու և հիմնական միջոցների համալրում, ընթացիկ ծախսերի իրականացում և գործող ագրովարկերի գնում
Հաճախորդի նպատակային խումբը	21 - 70 տարեկան ՀՀ ռեզիդենտ հանդիսացող և ՀՀ տարածքում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձինք/անհատ ձեռնարկատերեր
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք[1]	12.9%
Տարեկան փաստացի ֆիքսված տոկոսադրույք	16.8% - 19.14%
Վարկի գումար	6,000,001 – 15,000,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	18-60 ամիս
Ապահովություն	Հոգեբանական կամ ֆինանսական երաշխավորի մեկ երաշխավորություն և անշարժ գույքի/ավանդի գրավային արժեքի/ՎՏԲ-Հայաստան բանկի մուրհակների/պետական հիմնադրամների երաշխիքների ցանկացած բաժնային համակցությամբ 100% աստիճան ապահովվածություն
Վարկի մարման եղանակ	Հավասարաչափ ամսական (անուիտետային) վճարումներ, անհատական ժամանակացույց կախված բիզնեսի սեզոնայնությունից
Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, անկանխիկ
Վարկի վաղաժամկետ մարման արգելք	Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան: Վարկառուն/ները իրավունք ունի/են՝ - առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառուն/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները: - վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառուի/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում: Ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման,

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար կանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

	պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները: Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:
Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	Մայր գումարի և տոկոսագումարի ժամկետանց մասի նկատմամբ տույժ 0.13% օրական (Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ օրական 0.13% չափով, սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:)
Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքներ	ՀԱՇՎԱՌՈՒՄ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐՎԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ: ՀԱՇՎԱՌՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ (ՏՈՒՆԸ, ՄԵՔԵՆԱՆ ԿԱՄ ԱՅԼ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ՀԱՇՎԱՌՈՒՄ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
Վարկի որոշման կայացման և հաճախորդին տեղեկացման առավելագույն ժամկետ	Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստանալուց հետո 1 աշխատանքային օր
Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Վարկի որոշման կայացումից անմիջապես հետո
Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	2.01% ֆիզիկական անձ հաճախորդի դեպքում / 2.5% իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր հաճախորդի դեպքում
Վարկի սպասարկման ամսական միջնորդավճար (հաշվարկվում է հիմնական գումարի մնացորդի նկատմամբ)	0.35%
Բանկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար	Համաձայն բանկային հաշիվների և քարտային հաշիվների Բանկի սակագների https://www.vtb.am/am/accounts-and-payments/bank-account (Վարկային ծառայություններից օգտվելու համար հաճախորդը պետք է ունենա բանկային հաշիվ)
Բանկային/Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ գործող «Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների» համաձայն https://www.vtb.am/am/accounts-and-payments/bank-account
Վարկի տրամադրման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար կանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

Գործարքի դիտարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	ՖԱ վարկառուի համար. 1. Վարկ ստանալու դիմում 2. Այլ փոխկապակցված անձանց անձնագրերի և սոց.քարտերի և ՀԾՀ կամ ID պատճեններ (սոց.քարտերի կամ ՀԾՀ բացակայության դեպքում, տեղեկանք բացակայության մասին) 3. Սեփականության վկայական/գործունեության իրականացման տարածքի վարձակալության պայմանագրի պատճեններ (առկայության դեպքում, 1.000.000 ՀՀ դրամ և ավել սահմանաչափով վարկերի պարագայում) 4. Համաձայնություն վարկառուի անվամբ ACRA-ից վարկային պատմություն ստանալու համար, 5. Պայմանագրեր մատակարարների, գնորդների և կոնտրագործակալների հետ (առկայության դեպքում) 6. Գործունեության և բնակության վայրի լուսանկարներ, 7. Ռեյտինգ 8. Տեղեկանք վարչակազմից 9. Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում) 10. Ամուսնալուծության վկայական, եթե Վարկառուն ամուսնալուծված է, ամուսնության վկայական, եթե Վարկառուի ամուսնությունը պաշտոնապես գրանցվել է 11. Տեղեկանք աշխատավայրից (եթե աշխատում են ուժային կառույցներում կամ արտասահմանյան ընկերություններում, օրինակ, դեսպանատներում, հյուպատոսություններում և այլն) կամ (եթե կլինեն երաշխավորներ եկամուտով բիզնեսից, ապա անհրաժեշտ է ավելացնել փաստաթղթեր դրանց մասով) կամ քաղվածք Բանկից: ԻԱ/ԱՁ վարկառուի համար. 1. Վարկային հայտ (վարկառուի, երաշխավորների և գրավատուների համար) 2. Տնօրենի անձնագրի և սոց.քարտերի և ՀԾՀ պատճեններ կամ հիմնադիրների, երաշխավորների և այլ փոխկապակցված անձանց ID (սոց.քարտերի կամ ՀԾՀ բացակայության դեպքում, տեղեկանք բացակայության մասին) 3. Պետ.ռեգիստրի վկայականի պատճեն (ԻԱ/ԱՁ համար) 4. ՀՎՀՀ պատճեն (ԻԱ/ԱՁ համար) 5. Կանոնադրության պատճեն (ԻԱ համար) 6. Լիցենզիայի պատճեն (եթե անհրաժեշտ է գործունեության տվյալ տեսակի դեպքում) 7. Սեփականության վկայական/գործունեության իրականացման տարածքի վարձակալության պայմանագրի պատճեններ (առկայության դեպքում, 1.000.000 ՀՀ դրամ և ավել սահմանաչափով վարկերի պարագայում) 8. Ամուսնալուծության վկայական, եթե Վարկառուն ամուսնալուծված է, ամուսնության վկայական, եթե Վարկառուի ամուսնությունը պաշտոնապես գրանցվել է 9. Վերջին տարվա հարկային հաշվետվությունը կամ ԻԱ/ԱՁ գործունեության ամբողջ ժամանակաշրջանի համար, եթե ԻԱ/ԱՁ գործում է տարուց պակաս: 10. Հիմնական միջոցների նկատմամբ սեփականությունը հաստատող փաստաթղթերի պատճեններ (տեխ.անձնագիր, սարքավորման գնման հաշիվ-ապրանքագիր և այլն) (առկայության դեպքում) 11. Ապրանքի իրացման պայմանագիր (առկայության դեպքում) 12. Ռեյտինգ 13. Գործունեության և բնակության վայրի լուսանկարներ 14. Տեղեկանք վարչակազմից 15. Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում) 16. Տեղեկանք աշխատավայրից (եթե աշխատում են ուժային կառույցներում կամ արտասահմանյան ընկերություններում, օրինակ, դեսպանատներում, հյուպատոսություններում և այլն) կամ (եթե կլինեն երաշխավորներ եկամուտով բիզնեսից, ապա անհրաժեշտ է ավելացնել փաստաթղթեր դրանց մասով) կամ քաղվածք Բանկից:

ՖԱ երաշխավորի համար

1. Անձը հաստատող փաստաթղթի, սոց.քարտի պատճեններ (սոց.քարտի բացակայության դեպքում, տեղեկանք բացակայության մասին)
2. տեղեկանք եկամուտների մասին կամ քաղվածք Բանկից , եթե եկամուտն աշխատավարձից է
3. Սեփականության վկայականի պատճեն, եթե եկամուտը Ագրոգործունեությունից է (1.000.000 ՀՀ դրամ և ավել սահմանաչափով վարկերի պարագայում)
4. Տեղեկանք վարչակազմից Ագրո գույքի երաշխավորի մասով՝ ՌՄ պահանջով, եթե եկամուտը Ագրո գործունեությունից է
5. Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում),
6. ՀՎՀՀ պատճեն, ԱՁ/ԻԱ վերջին 6 ամսվա հարկային հաշվետվություն, եթե եկամուտը բիզնեսից է:

ԻԱ/ԱՁ երաշխավորների փոխկապակցված անձանց համար

1. Երաշխավորության տրամադրման դիմում
2. Վերջին 6 ամսվա հարկային հաշվետվություն, եթե եկամուտը բիզնեսից է
3. Սեփականության վկայականի պատճեն, եթե եկամուտը Ագրոգործունեությունից է (1.000.000 ՀՀ դրամ և ավել սահմանաչափով վարկերի պարագայում)
4. ԱՁ-ի համար անձը հաստատող փաստաթղթի պատճեն, ԻԱ տնօրենի/հիմնադրի համար անձը հաստատող փաստաթղթի և սոց.քարտերի և ՀԾՀ պատճեններ (սոց.քարտերի կամ ՀԾՀ բացակայության դեպքում, տեղեկանք բացակայության մասին)
5. Պետ.ռեգիստրի վկայականի պատճեն կամ քաղվածք ԻԱ Միասնական պետական գրանցամատյանից,
6. ԱՁ/ԻԱ ՀՎՀՀ պատճեն (առկայության դեպքում), եթե եկամուտը բիզնեսից է
7. Կանոնադրության պատճեն (ԻԱ համար), եթե եկամուտը բիզնեսից է
8. Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում):

Ուշադրություն՝
Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝
- Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,
- «ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդն ունի բացասական վարկային պատմություն,
- Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ,
- Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:

Վարկային պատմության էությունը և դրա կարևորությունը՝

Վարկային պատմությունը հաճախորդի ֆինանսական և հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է, ինչպես վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի (ԱՔՌԱ) կողմից: Այսինքն վարկային պատմությունը ցույց է տալիս, թե հաճախորդը ինչպես է կատարել և շարունակում կատարել իր բոլոր ֆինանսական պարտավորությունները: Այն պարունակում է հաճախորդի ստացած վարկերի, դրանից բխող մարումների կատարման, այլ մարդկանց տրված երաշխավորությունների, ժամկետանց վարկերի առկայության, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժ ու տուգանքների մասին տեղեկատվություն:
Հղում՝ https://www.abcfinance.am/lifesituations/credit-history.html և www.acra.am

Վարկային ՍՔՈՐ գնահատականի էությունը՝

Բանկը վարկ տրամադրելու նպատակով վարկառուին գնահատում է բալային համակարգի միջոցով, որի արդյունքում ձևավորվում է ՍՔՈՐ գնահատականը: Այն իրենից ներկայացնում է մի շարք համախմբված գործոնների ամբողջականություն, որոնցից է օրինակ վարկային պատմությունը, անձնական տվյալները և այլ գործոններ:
Հղում՝ https://abcfinance.am/news/news_varkayinscore.html և www.acra.am

ՍՔՈՐ գնահատականի կարևորությունը՝

Ինչո՞ւ է կարևոր ունենալ բարձր ՍՔՈՐ գնահահատական: Նպատակը մեկն է՝ այն հարկավոր է Բանկին հասկանալու համար, թե որքան ռիսկային է հաճախորդին վարկ տրամադրելը: Յուրաքանչյուր ՍՔՈՐ-ի տեսակ ունի իրեն բնորոշ գնահատականի միջակայքը և որքան հաճախորդի գնահատականը մոտ է առավելագույն շեմին, այդքան ավելի բարձր է վարկ ստանալու հավանականությունը: Բարձր ՍՔՈՐ-ը վկայում է ցածր ռիսկի մասին և հակառակը՝ ցածր ՍՔՈՐ-ը վկայում է բարձր ռիսկի մասին:

Կիրառվող ՍՔՈՐ-ի տեսակը և նրա վրա ազդող հիմնական գործոնները՝

Բանկն առաջնորդվում է իր սեփական սքորինգային համակարգով, որի հաշվարկի մանրամասները հանդիսանում են առևտրային գաղտնիք: Սակայն կարող ենք նշել մի քանի գործոն, որոնք ազդում են ՍՔՈՐ-ի վրա՝

- հաճախորդի վարկի մարումների պատմություն (դրական վարկային պատմությունը բարձրացնում է ՍՔՈՐ-ը, իսկ մարումների ուշացումները իջեցնում են ՍՔՈՐ-ը),
- հաճախորդի վարկերի քանակ (բավմաթիվ գործող վարկերի առկայությունը իջեցնում է ՍՔՈՐ-ը),
- հաճախորդի սոցիալական գործոններ՝ տարիք, աշխատավարձ և այլն (կարող են ունենալ ՍՔՈՐ-ի վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն, կախված գործոնի տեսակից):

Նշենք նաև, որ վարկային պատմության հարցումը կարող է ազդեցություն ունենալ վարկային ՍՔՈՐ գնահատականի վրա (կարող է իջեցնել գնահատականը), որն էլ իր հերթին կարող է ազդել Բանկի հաճախորդին վարկ տրամադրելու որոշման վրա և հանդիսանալ բացասական որոշման կայացման պատճառ:

Ինչպես բարելավել վարկային պատմությունը և ՍՔՈՐ գնահատականը՝

Վարկային պատմությունը և ՍՔՈՐ գնահատականը բարելավելու համար հարկավոր է բացառել վարկերի մարումների ուշացումները՝ կատարելով այն սահմանված գրաֆիկին համապատասխան, մարել կամ նվազեցնել վարկային պարտավորությունները, նվազեցնել վարկերի քանակը՝ թեթևացնելով վարկային բեռը, նվազեցնել տրված երաշխավորությունները՝ կրճատելով դրանց քանակը, գումարը, ինչպես նաև, առկայության դեպքում ապահովել այս մասով՝ ժամկետանց պարտավորությունների լրիվ մարումը: Հաճախորդի արդեն գրանցված վատ վարկային պատմությունը կարող է վերափոխվել յուրաքանչյուր հաջորդ վարկի ընթացքում հաճախորդի վարքագծի փոփոխության և պարտաճանաչության արդյունքում: Ուստի վարկային պատմության և ՍՔՈՐ-ի վատթարացումից խուսափելու և բարելավումը ապահովելու համար պետք է բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման նույնիսկ մեկօրյա ուշացումները, լիովին մարել նախկինում գոյացած ժամկետանց վարկային վճարների ուշացումները, խուսափել ապագայում անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց, թեթևացնել վարկային բեռը և այլն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՌ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ և ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ https://www.vtb.am/am/information/raschet-fakticheskoy-stavki ՀԱՍՑԵՈՎ:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՌ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԵ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ՝ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՐՈՂ Է ՀԱՃԱԽՈՐԴԻՑ «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» («KNOW YOUR CUSTOMER») ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ (FOREIGN ACCOUNT TAX COMPLIANCE ACT (FATCA))» ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱՆԿԸ ՁԵՐ՝ ԱՄՆ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար կանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝ www.fininfo.am ԿԱՅՔԸ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»:

՝

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար կանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով: